



ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 117 -Ա « 03 » 04 2024թ.

ք. Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

03.04.2024

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336



ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում՝ Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման համար (մասնավորապես՝ Կոմիտեի www.stateproperty.am պաշտոնական կայքի տեխնիկական սպասարկման և ծրագրային ապահովման աշխատանքների իրականացման, Կայքի անխափան աշխատանքի ապահովման, էլեկտրոնային աճուրդների անցկացման (հասցե՝ www.e-auctions.am), ինչպես նաև պետական գույքի հաշվառման ավտոմատացված ու ամբողջական համակարգերի ընթացիկ տեխնիկական սպասարկում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

- բարձրագույն կրթություն, տեղեկատվական համակարգերի ոլորտում առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ,
- «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
- ծրագրային և համակարգային անսարքությունների վերացման ունակություն,
- կազմակերպչական և վերջնաժամկետներում առաջադրանքների կատարման հմտությունների տիրապետում,
- արդյունավետ հաղորդակցման և պլանավորման հմտությունների տիրապետում,
- հարմարվողականություն/ճկունություն, խնդիրների լուծման հմտություններ:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեի կայքի սպասարկում,

բ. օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում,

գ. Կայքի վերականգնում պահուստային կրկնօրինակներից՝ ըստ անհրաժեշտության,

դ. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, նաև բաժինների ծրագրային թարմացում,

ե. Կայքի այցելությունների և որոնողական համակարգերում կայքի տեսանելիության վերաբերյալ պարբերաբար մոնիթորինգի իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում,

զ. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում,

է. որոնման համակարգերի համար Կայքի օպտիմալացման և համապատասխան կարգաբերումների իրականացում,

ը. Կայքի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմի տեխնիկական աջակցության իրականացում,

թ. Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխությունների (որոնք չեն հանգեցնում Կայքի ընդհանուր արտաքին տեսքի փոփոխության) իրականացում, ըստ անհրաժեշտության և տրամադրված նյութերի,

ժ. Կայքի տվյալների շտեմարաններից անհրաժեշտության դեպքում՝ հաշվետվությունների արտահանում,

ժա. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև սխալների վերացում,

ժբ. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների ծրագրային ապահովման անխափան աշխատանքի ապահովում,

ժգ. անվտանգության SSL սերտեֆիկատի տրամադրում և տեղադրում սերվերի վրա,

ժդ. էլեկտրոնային աճուրդների անցկացման, ինչպես նաև պետական գույքի հաշվառման ավտոմատացված ու ամբողջական համակարգերի (այսուհետ՝ Համակարգ) ծրագրային ապահովում, ինչպես նաև Համակարգի ընթացիկ տեխնիկական սպասարկում,

ժե. Համակարգի միանվագ (սկզբնական) կարգաբերում,

ժը. արձանագրված, այնպես էլ փորձագետի կողմից հայտնաբերված և հրատապ լուծում պահանջող գործընթացի իրականացում ներառյալ՝ ծրագրային ապահովման կարգաբերում, վնասված հատվածների կամ ամբողջականության վերականգնում, այդ թվում՝ Համակարգի թերի աշխատանքի ուսումնասիրում, անավարտ կամ թերի իրագործված հատվածների դուրս բերում, Համակարգի աշխատանքի խափանումների (ներառյալ՝ ծրագրային և այլ բնույթի թերությունների ու բացթողումների) վերացման (շտկման) նպատակով անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների կատարում,

ժթ. Համակարգի կայքի դիզայնի արդիականացում, անհրաժեշտության դեպքում՝ փոփոխություն,

ի. Համակարգի կայքի ֆունկցիոնալի անխափան ու մատչելի հասանելիության ապահովում,

իա. Համակարգի ծրագրային ապահովման ընթացիկ լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն, որը ներառում է. Համակարգի ծրագրային ապահովման կառուցվածքի կատարելագործման նպատակով դրանում անհրաժեշտ փոփոխությունների կատարում, Համակարգում կատարվող գործողությունների փոփոխության անհրաժեշտությունից բխող ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարում, Համակարգում նոր գործողություններ կատարելու անհրաժեշտությունից բխող ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարում, Համակարգում ֆունկցիոնալ վերափոխումների ու լրացումների կատարում, Համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումների և նորացումների տեղադրում, բացառությամբ՝ ամբողջովին նոր համակարգի ստեղծման դեպքի,

իբ. անհրաժեշտության դեպքում՝ տվյալների տեսակներին համապատասխան Համակարգի տվյալների շտեմարանների կառուցվածքներում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարում, ինչպես նաև Համակարգում տարբեր գործողությունների կատարման առանձին իրավունքների փոփոխությունների (ավելացում, նվազեցում) կատարելու հնարավորության ապահովում,

իգ. Համակարգի ծրագրային ապահովման մեջ յուրաքանչյուր լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն (ներառյալ՝ դրանց խմբերը), կատարելու ավարտի Համակարգի ամբողջական փորձարկում,

իդ. Համակարգի փորձարկման անընդհատության ապահովում,

իե. Համակարգի սպասարկում, որն նեառում է՝ Ծրագրային փաթեթի ֆունկցիոնալի սպասարկում (FrontEnd և BackEnd), անխափան հասանելիության ապահովում, Համակարգի սերվերային բաղադրիչների սպասարկում, Համակարգի ֆունկցիոնալի մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հարցում, բազմաշերտ ցանցային անվտանգության (Firewall) ապահովում, ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում, սերվերային սարքավորումների մոնիթորինգ,

իզ. Համակարգին տարբեր պետական մարմինների գոյություն ունեցող միացումների անխափան աշխատանքի ապահովում, սերվերների և երթուղավորիչների կարգաբերում և սպասարկում (Server/Router configuration and maintenance),

իէ. Համակարգի տվյալների բազայի օրական պահուստային կրկնօրինակում (backup) ֆիզիկական այլ հասցեում գտնվող կրիչի/սերվերի վրա,

իը. Համակարգին, կամ դրա որոշակի ենթահամակարգերին ու ծառայություններին տարբեր շահառուների հասանելիության կարգաբերում, նրանց հասանելի ծառայությունների տեսակների սահմանափակումների ապահովում՝ ըստ իրենց IP ստատիկ հասցեների,

իթ. անհրաժեշտության դեպքում՝ սերվերների վիրտուալ բաժանում, օպերացիոն համակարգերի տեղադրում, Համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր,

լ. սերվերների ծրագրային ապահովման և օպերացիոն համակարգերի թարմացում՝ ծրագրային ապահովման աշխատանքն ապահովող բոլոր սերվերների համար,

լա. Համակարգի աշխատանքի ընթացիկ խափանումների վերաբերյալ մեկ ժամվա ընթացքում արձագանքում,

լբ. Համակարգի աշխատանքի ընթացիկ խափանումների, թերությունների և բացթողումների շտկում,

լգ. անհրաժեշտության դեպքում՝ Համակարգում ինչպես նոր, այնպես էլ դրանում արդեն իսկ գրանցված օգտվողների փոփոխությունները (ավելացում, նվազեցում, հեռացում) նրա կողմից կատարելու հնարավորության ապահովում,

լդ. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում՝ տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից,

լե. Համակարգի գործող կայքում (էլեկտրոնային մատյան) գործարքների տվյալների և կատարված աշխատանքների ընթացքի արխիվացման հնարավորության ապահովում,

լզ. անհրաժեշտության դեպքում՝ Համակարգից ցանկացած օգտվողի կողմից կատարված գործողությունների վերծանումների տրամադրում,

լէ. սերվերների տեխնիկական և ծրագրային անվտանգության ապահովման և Համակարգի հետ կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ամսական պարբերականությամբ տրամադրում,

լը. Համակարգի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմին տեխնիկական աջակցության ապահովում, ինչպես նաև Համակարգից օգտվող պետական մարմինների ու կազմակերպությունների աշխատակիցների՝ կայքից գրագետ օգտվելու պահանջների ու պայմանների տեսական ու գործնական ուսուցում:

2) Փորձագետը պարտավոր է ապահովել Համակարգի ու դրա աշխատանքի վերաբերյալ իրեն հայտնի տեղեկատվության գաղտնիությունը:

3) Փորձագետը հանդիսանալու է Կայքի և Համակարգի ադմինիստրատոր, իրականացնելու է Համակարգի վերահսկումը, ապահովելու է դրա անվտանգ աշխատանքը և պատասխանատու է Համակարգի անխափան ու անթերի շահագործման համար:

4) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ: Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների, որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«լթ» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Կոմիտեի կայքը սպասարկվել է,

բ. օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակներն ստեղծված է,

- գ. Կայքը վերականգնված է պահուստային կրկնօրինակներից՝ ըստ անհրաժեշտության,
- դ. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքը փոփոխված է, նաև բաժինների ծրագրային թարմացումն իրականացված է,
- ե. Կայքի այցելությունների և որոնողական համակարգերում կայքի տեսանելիության վերաբերյալ պարբերաբար մոնիթորինգն իրականացված է՝ մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացված է,
- զ. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալներն ուղղված է,
- է. որոնման համակարգերի համար Կայքի օպտիմալացման և համապատասխան կարգաբերումներն իրականացված է,
- ը. Կայքի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմի տեխնիկական աջակցությունն իրականացված է,
- թ. Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխությունների (որոնք չեն հանգեցնում Կայքի ընդհանուր արտաքին տեսքի փոփոխության) իրականացված է,
- ժ. Կայքի տվյալների շտեմարաններից հաշվետվություններն արտահանված է,
- ժա. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերություններն, ինչպես նաև սխալների վերացված է,
- ժբ. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների ծրագրային ապահովման անխափան աշխատանքն ապահովված է,
- ժգ. անվտանգության SSL սերտեֆիկատը տեղադրված է սերվերի վրա,
- ժդ. էլեկտրոնային աճուրդների անցկացման, ինչպես նաև պետական գույքի հաշվառման ավտոմատացված ու ամբողջական համակարգերի ծրագրային ապահովված է, ինչպես նաև Համակարգի ընթացիկ տեխնիկական սպասարկումն իրականացված է,
- ժէ. Համակարգի միանվագ (սկզբնական) կարգաբերման իրականացված է,
- ժը. արձանագրված, այնպես էլ փորձագետի կողմից հայտնաբերված և հրատապ լուծում պահանջող գործընթացի իրականացված է, ներառյալ՝ ծրագրային ապահովման կարգաբերում, վնասված հատվածների կամ ամբողջականության վերականգնում, այդ թվում՝ Համակարգի թերի աշխատանքի ուսումնասիրում, անավարտ կամ թերի իրագործված հատվածների դուրս բերում, Համակարգի աշխատանքի խափանումների (ներառյալ՝ ծրագրային և այլ բնույթի թերությունների ու բացթողումների) վերացման (շտկման) նպատակով անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների կատարում:
- ժթ. Համակարգի կայքի դիզայնի արդիականացված է,
- ի. Համակարգի կայքի ֆունկցիոնալի անխափան ու մատչելի հասանելիությունն ապահովված է,
- իա. Համակարգի ծրագրային ապահովումն լրամշակված է. Համակարգի ծրագրային ապահովման կառուցվածքը կատարելագործված է, Համակարգում ֆունկցիոնալ վերափոխումներն ու լրացումները կատարված է, անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումներն իրականացված է և նորացումները տեղադրված է,

իբ. տվյալների տեսակներին համապատասխան Համակարգի տվյալների շտեմարանների կառուցվածքներում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարված է,

իգ. Համակարգի ծրագրային ապահովման մեջ յուրաքանչյուր լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն (ներառյալ՝ դրանց խմբերը), Համակարգի ամբողջական փորձարկումն իրականացված է,

իդ. Համակարգի փորձարկման անընդհատությունն ապահովված է,

իե. Համակարգի սպասարկումն իրականացված է, այդ թվում՝ Ծրագրային փաթեթի ֆունկցիոնալի սպասարկում (FrontEnd և BackEnd), անխափան հասանելիության ապահովում, Համակարգի սերվերային բաղադրիչների սպասարկում, Համակարգի ֆունկցիոնալի մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հարցում, բազմաշերտ ցանցային անվտանգության (Firewall) ապահովում, ցանցային ներխուժման փորձերի ախտորոշում և արգելափակում, սերվերային սարքավորումների մոնիթորինգ,

իզ. Համակարգին տարբեր պետական մարմինների գոյություն ունեցող միացումների անխափան աշխատանքն ապահովված է, սերվերների և երթուղավորիչների կարգաբերումն և սպասարկումն (Server/Router configuration and maintenance) իրականացված է,

իէ. Համակարգի տվյալների բազայի օրական պահուստային կրկնօրինակումն (backup) իրականացված է ֆիզիկական այլ հասցեում գտնվող կրիչի/սերվերի վրա,

իը. Համակարգին, կամ դրա որոշակի ենթահամակարգերին ու ծառայություններին տարբեր շահառուների հասանելիության կարգաբերումն, նրանց հասանելի ծառայությունների տեսակների սահմանափակումներն (ըստ իրենց IP ստատիկ հասցեների) ապահովված է,

իթ. սերվերների վիրտուալ բաժանում, օպերացիոն համակարգերը տեղադրված է,

լ. սերվերների ծրագրային ապահովման և օպերացիոն համակարգերը թարմացված է,

լա. Համակարգի աշխատանքի ընթացիկ խափանումների վերացված է մեկ ժամվա ընթացքում,

լբ. Համակարգի աշխատանքի ընթացիկ խափանումները, թերությունները և բացթողումները շտկված է,

լգ. Համակարգում ինչպես նոր, այնպես էլ դրանում արդեն իսկ գրանցված օգտվողների փոփոխություններն (ավելացում, նվազեցում, հեռացում) ապահովված է,

լդ. Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենները ստեղծված է (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգն իրականացված է,

լե. Համակարգի գործող կայքում (էլեկտրոնային մատյան) գործարքների տվյալների և կատարված աշխատանքների ընթացքի արխիվացումն ապահովված է,

լզ. Համակարգից օգտվողի կողմից կատարված գործողությունների վերծանումները տրամադրված է,

լէ. սերվերների տեխնիկական և ծրագրային անվտանգության ապահովման և Համակարգի հետ կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն ամսական պարբերականությամբ տրամադրված է,

լը. Համակարգի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմին տեխնիկական աջակցություն ցուցաբերված է, ինչպես նաև Համակարգից օգտվող պետական մարմինների ու կազմակերպությունների աշխատակիցների՝ կայքից գրագետ օգտվելու պահանջների ու պայմանների տեսական ու գործնական ուսուցումն իրականացված է: